ընդ տարուբերեալ օդամունս երկայնայածուկ ճանապարհին՝ ընդ որ մին դիմէր 'ի հայրենիս և միւսս յղարկէր, երկաքանչիւր հաւասարք յանձկութե։ Ո՛ղջ է և ընդ դժնդակագոյնն քան զնոսին, ո՛հ ո՛հ, ընդ բազմավտանգ օձաձև կենցաղոյս բաւիղս, դու ինքն „այսուհետև անցուցեալ զնոսա աղաչեմ, 'ի միակն յայն հուսկ ապա յարահետն 'ի քո կառուցես երկնաչու պողոտայ, որ միայն գիտէ հանել 'ի հանգիստ զհոգիս հիւծեալս 'ի դարձադարձ գեգերմանց հովտիս լալօնից '։

Հ. Ղ. Մ

Բանք Պէշլէմէճեան Յարութեան։

ՈՀԱ մեկնիմք, ահա կորզիմք 'ի հայրենի ձեր գրկաց, և երբ խօսեսցուք եթէ այլ ևս աղխեալ կացցեն բերանք. ահա հասին մեր յետին ժամք. փոքր միւս ևս և այլ չկայ մեզ վայելել 'ի տեսութիւն ձեր, և դեռ զալեալ արգելցին սիրտք 'ի յանձուկ ծոցի. ծն ժամ է տեղի տալ անզուսպ կրից սրտի, զի խիստ է սրտի ընկլուզելոյ յանգուդըս բարեաց ժուժալ լռել 'ի սպառ։ Թէպէտ աղկաղկ շրթունք զի՞նչ զօրեսցեն թարգման կալ ներքին մարդոյն, սակայն լաւ է թոթովել ինչ քան լռեալ կալ ամենևին։

Շատ իսկ լցուցին զմեզ, ով հարք, առ 'ի ձէնջ զեղեալ տարափք երախտեաց. շատ իսկ 'ի հայրախնամ սրտից բղխեցին մեզ սահմանք հայրագորով սիրոյ։ Թէ ոչ գտաք երկիր հիւթեղ բեղմնաւոր՝ փոխարինել հարիւրապատիկ տոհմականօք զառ 'ի ձէնջ մեզ շըռայլեալ զանխնայ վաստակս և քրտունս, սակայն կրեմք անշուշտ սիրտ հայրասէր որդեկաց, որ ոչ ապախտ առնեն և զդոյզն ինչ նիշ հայրագութ ձեր սիրոյ։

1 Աստղանիշս այս բան ակնարկէ 'ի դէպս ուղևորութեան մանկտւոյն 'ի Թրիեստ քաղաքէ 'ի Վիէննա ընդ ցամաք, և անտի ապա դանուբեան շոգենաւուք ընդ Եւքսինեանն Պոնտոս 'ի Բիւզանդիոն, ուր և ժամանեցին ողջամբ 'ի 16 Յունիսի։

՝Ներեցէք անժոյժ զարմանացս, ով հարք որդեսէրք. զի՞նչ զձեզ շարժէ յայսչափ սէր և գութ առ օտարս որդիացեալս ձեզ. զի ոչ նպաստէ ձեզ յայս բնածին գորով աղեաց ծնողի. զի՞նչ այլ քան թէ վսեմ առաքինութիւն անձնեղ կերպարանեալ 'ի ձեզ, և իղձք ազգասէրք որով, ո՛վ հարք հայրենեաց, իբրև տանուտեարք մեծի ընտանեաց, ոչ այլ ինչ հոգայք և երկնէք բայց միայն զօգուտ ազգիս։ Երանի՜ մեզ, որ միայն արժանի գտաք 'ի մէջ համօրէն ազգիս՝ տեսութեան հասարակաց հարցդ մերոց, և 'ի մօտոյ զգացեալ 'ի ձէնջ մարթիմք դոյզն բանիւ մատուցանել ձեզ զերախտապարտ շնորհակալիս մեր։ Այս շատ է մեզ՝ երանելի զանձինս վարկանել զամենայն աւուրս մեր, և որոց 'ի հեռաստանէ 'ի համբաւոյ ծանուցեալ ըզձեզ գովութիւն հարկանիցեն ձեզ, պանծալ բարձրագլուխ թէ մեք առ ոտս նոցա մնաք և յոր 'ի տեսութիւն նոցա վայելեցաք։

Այլ քեզ մանաւանդ, ով հայր հարց մերոց, քեզ առաւել քան այլ ումեք սիրտք մեր սիրայեղցք շնորհապարտ ճանաչեն զանձինս, որ կորզեալ զմեզ 'ի հայրենի գրկաց, մանաւանդ թէ յայլ փոխադրեալ ծոց հայրենի հաստուցեր զմեզ յայս երանութիւն, և շնորհ ունիմք գեղեցիկ բաղդին որ դարձեալ հայր կարգեաց մեզ զքեզ, և արդ արժանի գտանիմք ընդունել 'ի քէն զյետին օրհնութիւնդ։ Ի քեզ երբեմն գըտեալ հայր որդեսէր՝ սփոփեցաք ընդ բաժանիլն 'ի ծնողաց. արդ ո՞ մեզ մխիթար ընդ անջատումս 'ի նմին քաղցր հօրէ հարց մերոց։